**«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»**
**բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)**
**տնօրենների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ)**
**ՈՐՈՇՈՒՄ թիվ 10**

(Կազմված է «03» նոյեմբերի 2021 թ.-ին և բաղկացած է 2 (երկու) թերթից)

***Ժողովի անցկացման վայր՝*** ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2
***Ժողովի անցկացման տարի, ամիս, ամսաթիվ*** ՝ 2021 թվականի նոյեմբերի 3
***Ժողովի սկիզբ՝*** ժամը 09:30

Խորհրդի նիստին ներկա էին՝

1) Միխաիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ
2) Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ
3) Վազգեն Նիկոյանը՝ խորհրդի անդամ
4) Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ

**ՀՀ օրենսդրությամբ և «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության կանոնադրության համաձայն՝ քվորումն ապահովված էր, Խորհրդի նիստն իրավասու էր:**

**ՕՐԱԿԱՐԳ՝**

Ընկերության կողմից դուստր ընկերության ստեղծում, այդ ընկերության կանոնադրական կապիտալի չափի սահմանում (*ներառյալ բաժնեփոմսերի քանակի և անվանական արժեքի հասփատում*), այդ ընկերությանը «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության մասնակցության սահմանում, կանոնադրության հաստատում և տնօրենի նշանակում:

Զեկուցող՝ Խաչատուր Անտոնյան

**ՔՆՆԱՐԿՎԵՑ՝**

Օրակագում ընդգրկված հարցը՝ Ընկերության կողմից դուստր ընկերության ստեղծում: Քննարկվող հարցի վերաբերյալ Զեկուցողը հայտնեց, որ ներկայիս տնտեսական մարտահրավերներին ավելի արդյունավետ դիմագրավելու համար առաջացել է անհրաժեշտություն ստեղծելու դուստր ընկերություն:

Զեկուցողն առաջարկեց ստեղծել «ԱՍԿԵ ԹՐԵՅԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն կազմակերպաիրավական ձևի առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ: Զեկուցողն առաջարկեց ստեղծվող ընկերության կանոնադրական կապիտալի չափը սահմանել 50.000 (հիսուն հազար) դրամ, որը բաժանված է 5 (հինգ) բաժնեմասերի՝ յուրաքանչյուրը 10.000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով: Զեկուցողն առաջարկեց նոր ստեղծվող ընկերությունում «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի կողմից ապահովել 100 տոկոսանոց մասնակցություն, որի արդյունքում այդ ընկերության բոլոր բաժնեմասերը կպատկանեն Ընկերությանը: Առաջարկվեց նաև հաստատել նոր ստեղծվող ընկերության կանոնադրությունը և տնօրեն նշանակել Գրիգորի Էդուարդի Սարիբեկյանին:

Հարցը դրվեց քվեարկության՝

Միխաիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ — ԿՈՂՄ

Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ — ԿՈՂՄ

Վազգեն Նիկոյանը՝ խորհրդի անդամ — ԿՈՂՄ

Դավիթ Յավրոյանը՝ խորհրդի անդամ — ԿՈՂՄ

Ընդամենը՝ կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, չի մասնակցել՝ 0

**ՈՐՈՇՎԵՑ՝**

1) Ստեղծել «ԱՍԿԵ ԹՐԵՅԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն կազմակերպաիրավական ձևի առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ:
2) «ԱՍԿԵ ԹՐԵՅԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի չափը սահմանել 50.000 (հիսուն հազար) դրամ, որը բաժանված է 5 բաժնեմասերի՝ յուրաքանչյուրը 10.000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով:
3) «ԱՍԿԵ ԹՐԵՅԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի կողմից ապահովել 100 տոկոսանոց մասնակցություն, որի արդյունքում «ԱՍԿԵ ԹՐԵՅԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բոլոր բաժնեմասերը պատկանում են «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ին:
4) Հաստատել «ԱՍԿԵ ԹՐԵՅԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրությունը:
5) Ընկերության տնօրեն հաստատել Գրիգորի Էդուարդի Սարիբեկյանին (նույն. քարտ՝ 000733519 տրվ. «12» «08» 2013թ. 004-ի կողմից, հասցե՝ ՀՀ ք. Երևան, Կոմիտասի 25/5 տուն, ՀԾՀ ՝3912800588, էլ. փոստ՝saribekyan@asce.am)՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր անորոշ ժամկետով:

ՀՀ ԵՐԵՎԱՆ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ OPEN JOINT-STOCK COMPANY ԱՍԿԵ ԳՐՈՒՊ АСКЕ ГРУП ASCE GROUP 02800588

Միխաիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ

Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ

Վազգեն Նիկոյանը՝ խորհրդի անդամ

Դավիթ Յավրոյանը՝ խորհրդի անդամ